ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՕԶՈՆԱՅԻՆ ՇԵՐՏԸ ՔԱՅՔԱՅՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՍԻՆ

Ընդունվել է 27.11.2006

- Գլուխ 1. Ընդհանուր դրույթներ
- Գլուխ 2. Օզոնային շերտը քայքայող նյութերի գործածման բնագավառում պետական կարգավորումը
- Գլուխ 3. Օզոնային շերտը քայքայող նյութերի գործածման սկզբունքները ու կարգը
- Գլուխ 4. Օզոնային շերտը քայքայող նյութերի հաշվառումը
- Գլուխ 5. Եզրափակիչ դրույթներ

ԳԼՈՒԽ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

Սույն օրենքով կարգավորվում են օզոնային շերտը քայքայող նյութերի՝ Հայաստանի Հանրապետությունում արտադրության, ներմուծման, արտահանման եւ տարանցիկ փոխադրման նկատմամբ սահմանափակումները եւ դրանց հետ կապված հարաբերությունները՝ «Օզոնային շերտի պահպանության մասին» Վիեննայի կոնվենցիայի եւ «Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին» Մոնրեալի արձանագրության շրջանակներում կնքված միջազգային համապատասխան պայմանագրերը վավերացրած երկրների հետ:

Հոդված 2. Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին օրենսդրությունը

Օզոնային շերտը քայքայող նյութերի՝ Հայաստանի Հանրապետությունում արտադրության, ներմուծման, արտահանման եւ տարանցիկ փոխադրման նկատմամբ սահմանափակումներն ու դրանց հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքով, «Մթնոլորտային օդի պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, միջազգային պայմանագրերով, սույն օրենքով եւ իրավական այլ ակտերով:

Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

Հոդված 3. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

Սույն օրենքում օգտագործվում են հետեւյալ հիմնական հասկացությունները.

օզոնային շերտ ՝ մոլորակի սահմանամերձ շերտից վերեւ գտնվող մթնոլորտային օզոնի շերտը.

օզոնային շերտը քայքայող նյութեր ՝ քիմիական նյութեր, որոնք ցուցաբերում են կամ ունակ են ցուցաբերելու ոչ բարենպաստ ազդեցություն օզոնային շերտի վրա՝ մաքուր վիճակում կամ խառնուրդներում, որոնց միավոր զանգվածում օզոն քայքայող մաքուր նյութերի քանակը մեկ տոկոսից ավելի է.

կողմ հանդիսացող երկիր ՝ երկիր, որը վավերացրել է «Օզոնային շերտի պահպանության մասին» Վիեննայի կոնվենցիայի եւ «Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին» Մոնրեալի արձանագրության շրջանակներում կնքված միջազգային համապատասխան պայմանագրերը.

կողմ չհանդիսացող երկիր ՝ երկիր, որը չի վավերացրել «Օզոնային շերտի պահպանության մասին» Վիեննայի կոնվենցիայի եւ «Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին» Մոնրեալի արձանագրության շրջանակներում կնքված միջազգային համապատասխան պայմանագրերը.

ընդհանուր չափաքանակ (քվոտա) ՝ օզոնային շերտը քայքայող նյութերի՝ Հայաստանի Հանրապետություն ներմուծման թույլատրելի ընդհանուր քանակությունը՝ ըստ տարիների.

անհատական չափաքանակ (քվոտա) ՝ յուրաքանչյուր ներմուծողին օզոնային շերտը քայքայող նյութերի (նյութի) ներմուծման թույլատրվող քանակություն ամեն տարվա համար.

առաքման թույլտվություն ՝ օզոնային շերտը քայքայող նյութերի ներմուծման կամ արտահանման կամ տարանցիկ փոխադրման համար ներմուծող կամ արտահանող կամ տարանցիկ փոխադրում իրականացնող հայտատուին տրամադրվող փաստաթուղթ, որով թույլատրվում է այդ նյութերի ներմուծումը կամ արտահանումը կամ տարանցիկ փոխադրումը, եթե նման գործարքը համապատասխանում է սույն օրենքի պահանջներին.

հայտատու ՝ օզոնային շերտը քայքայող նյութերի ներմուծման կամ արտահանման կամ տարանցիկ փոխադրման գործարք կատարելու նպատակով առաքման թույլտվություն ստանալու մասին լիազոր պետական մարմին հայտ ներկայացրած իրավաբանական ու ֆիզիկական անձինք.

հայտ ՝ օզոնային շերտը քայքայող նյութերի ներմուծման կամ արտահանման կամ տարանցիկ փոխադրման գործարք կատարելու մասին դիմում, որը ներառում է ներմուծման, արտահանման կամ տարանցիկ փոխադրման երկրների անվանումները եւ տվյալներ հայտատուի եւ նրա կողմից ներմուծման կամ արտահանման կամ տարանցիկ փոխադրման ենթակա օզոնային շերտը քայքայող նյութերի անվանումների, քանակների, գործարքի իրականացման ժամկետների մասին:

ԳԼՈՒԽ 2

ՕԶՈՆԱՅԻՆ ՇԵՐՏԸ ՔԱՅՔԱՅՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ԳՈՐԾԱԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Հոդված 4. Հայաստանի Հանրապետության կառավարության իրավասությունները

Օզոնային շերտը քայքայող նյութերի գործածման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության իրավասություններն են՝

1) օզոնային շերտը քայքայող նյութերի ցանկի հաստատումը.

2) օզոնային շերտը քայքայող նյութերի ներմուծման ընդհանուր չափաքանակների (քվոտաների) սահմանումը.

3) օզոնային շերտը քայքայող նյութերի ներմուծման անհատական չափաքանակների սահմանման կարգի հաստատումը.

4) առաքման թույլտվության տրամադրման կարգի ու ձեւի հաստատումը.

5) օզոնային շերտը քայքայող նյութերի ներմուծմանը, արտահանմանը եւ տարանցմանը վերաբերող ենթաօրենսդրական ակտերի ընդունումը.

6) օզոնային շերտը քայքայող նյութերի գործածման բնագավառում քաղաքականության իրականացման ապահովումը:

Հոդված 5. Լիազոր պետական մարմնի իրավասությունները

Օզոնային շերտը քայքայող նյութերի գործածման բնագավառում լիազոր պետական մարմնի իրավասություններն են՝

1) օզոնային շերտը քայքայող նյութերի ներմուծման, արտահանման եւ տարանցիկ փոխադրման վերաբերյալ իրավական ակտերի մշակումը.

2) օզոնային շերտը քայքայող նյութերի քանակությունների հաշվառումը.

3) օզոնային շերտը քայքայող նյութերի անհատական չափաքանակների սահմանումը.

4) օզոնային շերտը քայքայող նյութերի առաքման թույլտվությունների տրամադրումը՝ ներկայացված հայտերի հիման վրա.

5) օզոնային շերտը քայքայող նյութերի գործածման բնագավառում քաղաքականության մշակումը.

6) օզոնային շերտը քայքայող նյութերի գործածման նկատմամբ վերահսկողությունը՝ Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով: